ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հասցե՝ Մարշալ Բաղրամյան 19 (Կենտրոն վարչ. շրջան) Հեռ.՝ +374 –11–51 –36–77

«05» «դեկտեմբերի» 2017թ. № Ա-Ժ-088/4

«Հետք» պարբերականի լրագրող
Սեդա Ղուկասյանին

Հարգելի տիկին Ղուկասյան

Ձեր կողմից ներկայացված հարցումը կօգնի մեզ՝ պատգամավորներիս, ավելի արդյունավետ աշխատել ընտրազանգվածի, ազգաբնակչության հետ:

Տեղեկացնում եմ, որ իմ գլխավոր գրասենյակը տեղակայված է Գյումրի քաղաքում, Աբովյան փ. 262/1 հասցեում:

Իմ աշխատակազմի որոշմամբ ընտրողների, քաղաքացիների ընդունելության հատուկ օրեր և ժամեր չի սահմանված, գրասենյակն աշխատում է ամեն օր առավոտյան 10:00-ից մինչև 20:00-ն: Գրասենյակը գտնվում է քաղաքի կենտրոնում: Շաբաթվա բոլոր օրերին, նշված ժամերին անհրաժեշտության դեպքում կարելի է կազմակերպել ընդունելություն օգնականներիս մասնակցությամբ, պահանջ առաջանալու դեպքում դիմողին ընդունում եմ նաև ես:

Անցած տարիների փորձը և ժամանակաշրջանը ապացուցեցին ընդունելության տվյալ ռեժիմի արդյունավետությունն ու օգտակարությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինձ դիմում են հանրապետության տարբեր բնակավայրերից, մարզերից, ինչպես նաև Երևան քաղաքից, ուստի հաջորդ տարվանից ցանկություն կա գրասենյակ ունենալ նաև Երևան քաղաքում:

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում՝ ս/թ հունիսի 15-ից մինչև հոկտեմբերի 30-ը գրասենյակը զանազան հարցերով ընդունել է 300-ից ավելի դիմողների: Ստացել ենք մոտ 50 նամակ, դիմում-բողոքներ, առաջարկություններ, բազմաթիվ խնդրանքներ, նաև դժգոհություններ:

Բնակիչներին, ընտրողներին հիմնականում անհանգստացնում է երկրի, Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի սոցիալ – տնտեսական ծանր վիճակը, վերահաս ձմռան վախը, կոմունալ – կենցաղային ծախսերի անվճարունակությունը, աշխատատեղերի հիմնովին բացակայությունը, առաջին անհրաժեշտության ապրանքների օրից – օր աճող գները, մասնավոր բանկերի կողմից իրականացվող թալանը, նրանց և դատական, հարկադիր

մարմինների հետ ստեղծված անորոշությունն ու քաշքշուկը, դատարանների կողմնակալ – միակողմանի որոշումները և այլն:

Առաջարկությունների մեջ մեծ տեղ է հատկացվում, որպեսզի հետագայում օրենսդրական փոփոխության արդյունքում Գյումրու քաղաքապետն ընտրվի ուղիղ ընտրությամբ, ընտրողների կողմից վստահված ձայների շնորհիվ, այլ ոչ թե ընտրված ավագանիների ձայներով:

Խիստ ընդգծվում է երկրի հեռավոր մարզերի, գյուղերի, սահմանամերձ տարածքների նկատմամբ իշխանությունների կողմից ցուցաբերած անտարբերությունը և անհոգատարությունը, ինչը ևս մեկ անգամ վկայում է Երևան քաղաքի գերբեռնվածությունը բոլոր ուղղություններով և ոլորտներով:

Խնդրանքների մեջ հիմնականում սոցիալական, տնտեսական, ֆինանսական ծանրագույն վիճակի, պարտքերի, ուսանողների ուսման վարձերի մասին է:

Կան դիմումներ համապատասխան կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ աշխատանքներում ստեղծված քաշքշուկների, անհամաձայնությունների և թերացումների վերաբերյալ: Տարածված խնդիրներից է, երբ բնակիչները չգիտեն, որտեղ դիմել խորհրդի, օգնության համար և դիմում են պատգամավորի օգնությանը: Այս գործում մենք նրանց օգնում ենք մեր միջամտությամբ:

Վերը նշված հարցերի, խնդրանքների, առաջարկությունների, դիմումների մոտ 50%-ը ստացել են լուծումներ տարբեր ձևերով և տեսակներով:

Իմ կողմից իրականացվել են հանդիպումներ մարզի, համայնքների, գյուղերի, քաղաքների ղեկավարների և ավագանու անդամների հետ տարբեր հարցերի շուրջ:

Վերը նշված աշխատանքի շնորհիվ իմ կողմից մի շարք հարցեր են ուղղվել կառավարությանը և փորձել եմ զանգվածային լրատվամիջոցներին, կայքէջերին և հեռուստատեսային ընկերություններին տրված հարցազրույցների տեսքով վեր հանել խնդիրներ իշխանությունների առջև:

Իմ կողմից մի շարք այցելություններ են իրականացվել առանձին տարածքներ և գյուղեր:

Հարգանքով՝ Վարդան Ղուկասյան